

Կրթաթոշակներ JUST DILIJAN IT! ամառային ծրագրին մասնակցելու համար



2018 թվականին «Scholae Mundi Armenia» հիմնադրամը հայտարարում է ամառային «JUST DILIJAN IT!» երկշաբաթյա կրթական ծրագրին մասնակցելու 20 կրթաթոշակների տրամադրման մասին: Ծրագիրը հիմնված է կերպարվեստի և թատերական արվեստի, բնական գիտությունների, համակարգչային տեխնոլոգիաների, սպորտի և դիզայնի հեղինակային դասընթացների վրա: Փորձառու մասնագետների ղեկավարությամբ երեխաները իրենց համար կբացահայտեն հետաքրքիր կրթական ծրագրի, սպորտային միջոցառումների և հաղորդակցման բացառիկ միջազգային միջավայրի մի անմոռանալի համադրություն: Առավել մանրամասն տեղեկությունների համար այցելեք www.justdilijanit.org վեբկայք:

Անցկացման վայրը
UWC Dilijan College, Դիլիջան, Հայաստան (www.uwcdilijan.org)

Ծրագրի ժամկետները

Փուլ 1

07.06 – 20.06

Հիմնական լեզու՝
ռուսերեն

Փուլ 2

22.06 – 05.07

Հիմնական լեզու՝
ռուսերեն

Փուլ 3

07.07 – 20.07

Հիմնական լեզու՝
անգլերեն

Փուլ 4

22.07 – 04.08

Հիմնական լեզու՝
անգլերեն

Կրթաթոշակի համար կարող ես դիմել, եթե՝

Հայաստանի Հանրապետության քաղաքացի ես

սովորում ես Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Սյունիքի, Տավուշի կամ Ծիրակի մարզի կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցներից որևէ մեկում

ծնվել ես 2003 թ. հունվարի 1-ից 2005 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում

2017-18 ուսումնական տարվա առաջին կիսամյակի միջին գնահատականդ առնվազն 7.0 է

խոսում ես ռուսերեն կամ անգլերեն

ցանկություն ունես ծանոթանալու տարբեր երկրներից քո հասակակիցների հետ

ինքդ քեզ համարում ես ակտիվ երիտասարդ, որն ունի հաղորդակցման լավ հմտություններ և վճռականություն՝ բարելավելու հարազատ համայնքի կյանքը:

Հայտերի ընդունման վերջնաժամկետ՝ մայիսի 10, 2018 թ

Հայտը լրացնելու և ընտրության ընթացակարգի մասին ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել www.scholaemundi.org վեբկայք, կամ կապ հաստատել Հիմնադրամի հետ՝ Էլ-փոստ՝ scholarship@scholae-mundi.org, Հեռախոս՝ +374 98 700 461

